

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2014 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Երեւան 2015**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ.....	6
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ.....	8
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ.....	9
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ.....	10
Եվրոպական Միություն .....	10
Եվրոպական երկրներ.....	11
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ.....	13
Վրաստան .....	13
Իրան.....	14
Թուրքիա.....	14
ԱՊՀ.....	15
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ.....	15
ԱՊՀ մասնակից երկրներ .....	16
ԱՍԻԱԿԱՆ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ.....	18
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ.....	19
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ.....	21
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ .....	22
ՀԱՊԿ .....	22
ՆԱՏՕ.....	23
ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	24
ԳԼՈՒԲԱԼ ԱՆՏՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ.....	24
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	25
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	25
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	26
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ .....	27
ՍԵՎՇՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ .....	27
ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	28
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	28
ՄԻԱՆՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	29
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ .....	30
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.....	30
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ.....	30

## ՆԱԽԱԲԱՆ

2014 թվականի ընթացքում Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը ՀՀ Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշների և նրա կողմից տրված հանձնարարականների հիման վրա՝ շարունակել է աշխատանքներն՝ ուղղված երկրի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, տարբեր մայրցամաքներում Հայաստանի բարեկամների թվի ավելացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության զարգացմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի հեղինակության և դիրքերի ամրապնդմանը, արտերկրում հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող և մեր շահերին համահունչ նախաձեռնությունների իրականացմանը:

Տարվա ընթացքում կարևորագույն իրադարձությունը ՀՀ կողմից Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) միանալու գործընթացի հաջող ավարտն էր, ինչը բխում է Հայաստանի ռազմավարական շահերից, նոր հնարավորություններ է բացում երկրի տնտեսական զարգացման համար:

2014թ.-ին Հայաստանը շարունակել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ համատեղ ջանքերն՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը:

Ղարաբաղյան հակամարտության գոտում զինադադարի հաստատման 20-րդ տարեդարձին՝ Ադրբեջանի կողմից ռազմատենչ հռետորաբանությունը, հրադադարի ռեժիմի բազմաթիվ կոպտագույն խախտումները, անընդմեջ կրկնվող դիվերսիոն գործողությունները Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ու Արցախ – Ադրբեջան շփման գծում նոր թափ ստացան, որոնք Բաքվի ապակառուցողական կեցվածքի, բանակցային գործընթացի էությունը խեղաթուրող հայտարարությունների, միջնորդների առաջարկությունների շարունակական մերժման հետ միասին թույլ չտվեցին առաջընթաց գրանցել ինչպես հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ համաձայնության հասնելու, այնպես էլ վստահության ամրապնդման վերաբերյալ միջազգային հանրության կոչերն իրականություն դարձնելու գործում:

Օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին համանախագահ երկրները՝ նախ Ռուսաստանի նախագահը՝ Սոչիում, այնուհետև ԱՄՆ պետքարտուղարը՝ Նյուպորտում, և Ֆրանսիայի նախագահը՝ Փարիզում, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների մասնակցությամբ կազմակերպեցին գագաթաժողովներ՝ լարվածությունը նվազեցնելու, իրավիճակի հետագա սրումը կանխելու և հիմնախնդրի կարգավորման գործընթացը առաջ մղելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

ԼՂՀ Պաշտպանության բանակի ուսումնավարժական թոփչք իրականացնող ուղղաթիռի խոցումը, ուղղաթիռի անկնման վայրը շուրջ տաս օր շարունակ կրակի տակ պահելը, միջազգային մարդասիրական իրավունքի խախտման Ադրբեջանի հանցավոր կեցվածքը զգալի լարվածություն առաջացրին, ինչը համատապատասխան արձագանք ստացավ միջազգային հանրության կողմից:

ՀՀ դիվանագիտությունը շարունակեց ջանքերը իրավիճակի հետագա սրումը կանխելու և միջազգային հանրության ուշադրությունը Ադրբեջանի արկածախնդիր քաղաքականության վրա հրավիրելու նպատակով:

Արտգործնախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները, Մփյուռքի կառույցների հետ համատեղ, շարունակել են հետևողական ջանքեր գործադրել՝ Հայաստանում և արտերկրում Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման ուղղությամբ՝ ի կատարումն ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրի և հանձնարարականների:

Շարունակվել են աշխատանքները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ:

Տարին նշանավորվել է Ռուսաստանի Դաշնության հետ դաշնակցային ռազմավարական հարաբերությունների առավել սերտացմամբ և խորացմամբ: Երկու երկրների բարձրագույն ղեկավարության պարբերական հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել ռազմավարական նշանակություն ունեցող պայմանավորվածություններ:

Հետևողական զարգացում է ապրել Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերությունը, համաձայնություն է ձեռք բերվել մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման վերաբերյալ:

Արտաքին քաղաքականության օրակարգում շարունակել է կարևոր տեղ զբաղեցնել եվրոպական ուղղությունը: Իրականացվել են հետևողական ջանքեր ինչպես եվրոպական կառույցների, այնպես էլ երկկողմ ձևաչափով եվրոպական պետությունների հետ բազմաբովանդակ կապերի խորացման ուղղությամբ: Ֆրանսիայի և Հունաստանի նախագահները պետական այցելություններ են կատարել Հայաստան:

Զգալի աշխատանքներ են իրականացվել հարևան պետությունների՝ Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ:

Հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման Հայաստանի սկզբունքային մոտեցումը շարունակել է վայելել միջազգային հանրության աջակցությունը: Հայաստանի արտգործնախարարը մասնակցել է Թուրքիայի նախագահի պաշտոնի ստանձնման արարողությանը, նրան փոխանցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով 2015թ. ապրիլի 24-ին Երևան այցելելու ՀՀ Նախագահի հրավերը՝ :

Մեծ ուշադրություն է հատկացվել ԱՊՀ շրջանակներում ընթացող համագործակցությանը, ԱՊՀ մասնակից պետությունների հետ երկկողմ կապերի զարգացմանը:

Հայաստանը շարունակել է դինամիկ զարգացող Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետությունների՝ հատկապես Չինաստանի, Հնդկաստանի և Ճապոնիայի հետ համագործակցության խորացման ուղղությամբ աշխատանքները: Երևանում բացվել է Ճապոնիայի դեսպանության ժամանակավոր գրասենյակը, որը 2015թ.-ի տարեսկզբից կգործի որպես Ճապոնիայի դեսպանություն:

Տարին նշանավորվել է արաբական ավանդական բարեկամ պետությունների հետ փոխգործակցության զարգացմամբ: Օրակարգում շարունակել են առանցքային տեղ զբաղեցնել սիրիահայության անվտանգության, Սիրիայի հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման, սիրիահայությանը օժանդակության ցուցաբերման, Քեսաբի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ միջազգային հանրության կողմից համապատասխան արձագանքի ապահովման հարցերը:

Միջազգային առյաններում Հայաստանը հետևողականորեն բարձրացրել է Իրաքի հյուսիսում, ընդհանրապես Մերձավոր Արևելքում ծայրահեղականների կողմից բռնությունների հետևանքով ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման, դրանց պաշտպանության նպատակով միջազգային հանրության ջանքերը միավորելու կարևորությունը:

Շարունակվել է ընդլայնվել դիվանագիտական կապերի աշխարհագրությունը: Այդ համատեքստում քայլեր են ձեռնարկվել լատինաամերիկյան մի շարք պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի անվտանգության կարևոր բաղադրիչ հանդիսացող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում Հայաստանը շարունակել է հանդես գալ որպես նախաձեռնող և ակտիվ մասնակից:

Բնականոն զարգացում է ապրել Հյուսիս-Ատլանտյան Դաշինքի կազմակերպության հետ փոխգործակցությունը:

Հայաստանը շարունակել է խորացնել իր ներգրավվածությունը ՄԱԿ-ի շրջանակներում: Մեծ ուշադրություն է հատկացվել Եվրոպայի Խորհուրդում, ԵԱՀԿ-ում, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում, միջազգային և տարածաշրջանային կառույցների ձևաչափերում ընթացող համագործակցությանը ՀՀ ակտիվ մասնակցությամբ: Հայաստանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ջինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի բյուրոյի փոխնախագահ:

Ջանքեր են գործադրվել միջազգային տնտեսական կառույցների և ֆինանսական հաստատությունների հետ կապերի զարգացման, տարբեր պետությունների հետ առևտրա-տնտեսական համագործակցության խորացման, հայկական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտման, օտարերկրյա ներդրումների խրախուսման ուղղություններով: Նախաձեռնվել և անցկացվել են տարբեր պետությունների հետ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար ֆորումներ, հայկական արտադրանքի ցուցադրություններ:

ԱԳՆ կողմից համակողմանի աջակցություն է ցուցաբերվել տարբեր պետությունների հետ միջխորհրդարանական կապերի զարգացմանը, բազմակողմ խորհրդարանական ձևաչափերում Հայաստանի խորհրդարանականների մասնակցությամբ: Կարևոր տեղ է հատկացվել ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներին:

ԱԳՆ-ը շարունակել է համակարգել ՀՀ պետական գերատեսչությունների արտաքին կապերը: Մեծ ուշադրություն է հատկացվել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությունների, հայկական մշակույթի

ներկայացման, արտերկրում գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանման և տարբեր պետությունների հետ մշակութային համագործակցության հաստատման և զարգացման ուղղությամբ ՀՀ մշակույթի նախարարության ջանքերի աջակցմանը:

Տարբեր երկրներում գտնվող ՀՀ քաղաքացիների շահերի պաշտպանության, ճգնաժամային իրավիճակներում հայտնված քաղաքացիների օժանդակության հարցերը եղել են ԱԳՆ գործունեության ուշադրության կենտրոնում:

2014թ.-ին ՀՀ Նախագահն իրականացրել է 21 օտարերկրյա այց: Հայաստան է այցելել 5 պետության ղեկավար: ԱԺ նախագահը կատարել է 5 պաշտոնական այց, Հայաստան են ժամանել 3 երկրների խորհրդարանների նախագահներ, ՀՀ վարչապետ կատարել է 7 այցելություն, Հայաստան է ժամանել 1 երկրի կառավարության ղեկավար: ԱԳ նախարարը կատարել է 34 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 11 արտգործնախարար և միջազգային կազմակերպության ղեկավար:

Շարունակվել են աշխատանքները՝ ուղղված ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանը:

#### ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

2014թ.-ին Հայաստանը շարունակել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ համատեղ ջանքերն՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում զինադադարի հաստատման 20-րդ տարեդարձին՝ Ադրբեջանի կողմից ռազմատենչ, սադրիչ հռետորաբանությունը, հրադադարի ռեժիմի բազմաթիվ կոպտագույն խախտումները, տարվա ընթացքում անընդմեջ կրկնվող դիվերսիոն գործողությունները Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ու Արցախ – Ադրբեջան շփման գծում նոր թափ ստացան, որոնք Բաքվի ապակառուցողական կեցվածքի, բանակցային գործընթացի էությունը խեղաթյուրող հայտարարությունների, միջոնրդների առաջարկությունների շարունակական մերժման հետ միասին թույլ չտվեցին առաջընթաց գրանցել ինչպես հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ համաձայնության հասնելու, այնպես էլ վստահության ամրապնդման վերաբերյալ միջազգային հանրության կոչերն իրականություն դարձնելու գործում:

Օգոստոսի 10-ին ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի նախաձեռնությամբ Սոչիում, սեպտեմբերի 4-ին ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի նախաձեռնությամբ Նյուպորտում և հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի Նախագահ Ֆրանսուա Օլանդի նախաձեռնությամբ Փարիզում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներ Սերժ Սարգսյանի և Իլհամ Ալիևի մասնակցությամբ կազմակերպեցին գագաթաժողովներ՝ լարվածությունը նվազեցնելու, իրավիճակի հետագա սրումը կանխելու և հիմնախնդրի կարգավորման գործընթացը առաջ մղելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Տարվա ընթացքում (հունվարի 24-ին՝ Փարիզում, ապրիլի 4-ին՝ Մոսկվայում, սեպտեմբերի 23-ին՝ Նյու Յորքում) երեք հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի միջեւ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ: ՀՀ արտգործնախարարը առանձին հանդիպումներ է ունեցել Մինսկի համանախագահների հետ (փետրվարի 22-ին՝ Փարիզում, մարտի 11-ին՝ Մոսկվայում, հուլիսի 22-ին՝ Բրյուսելում, դեկտեմբերի 3-ին՝ Բազելում): Համանախագահները 2014թ. փետրվարին, մայիսին, սեպտեմբերին և հոկտեմբերին այցելել են տարածաշրջան:

Աննախադեպ հանցավոր սադրանք էր նոյեմբերի 12-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախի պաշտպանության բանակի՝ ուսումնավարժական թոփչք իրականացնող ուղղաթիռի խոցումը, որը խլեց երեք երիտասարդ զինծառայողի կյանք: Ադրբեջանական զինուժը գրեթե տասն օր շարունակ ուղղաթիռի անկման վայրը պահեց ինտենսիվ կրակի տակ՝ թույլ չտալով փրկարար խմբերին, ԵԱՀԿ, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչներին՝ տարհանելու զոհված օդաչուների մարմինները: Դրանով էր պայմանավորված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նոյեմբերի 19-ի համատեղ հայտարարությունը, որով խորը մտահոգություն էր արտահայտվում՝ ուղղաթիռի անկման վայր մարդասիրական մուտքի արգելափակման կապակցությամբ:

Դեկտեմբերի 4-ին Բազելում՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ վերստին ընդգծելով, որ հիմնահարցի համապարփակ կարգավորման հիմք են հանդիսանում ԱՄՆ, ՌԴ և Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարություններում ամրագրված տարրերը և սկզբունքները:

Դեկտեմբերի 23-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանին ընդունվել է միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված հայտարարություն, որտեղ, մասնավորապես, նշվել է, որ. «ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնադրությունների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը»:

Դեկտեմբերի 29-30-ը կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովում Հայաստանի առաջարկությամբ եզրափակիչ փաստաթղթում ամրագրվել է ՖՄԿ անդամ պետությունների լիակատար աջակցությունը՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերին:

Օգոստոսի 28-ին ԱՄՆ Կալիֆոռնիայի Սենատի կողմից ընդունվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչման վերաբերյալ բանաձև:

Մեպտեմբերի 12-ին Իսպանիայի Բասկերի երկրի խորհրդարանն ընդունել է բանաձև՝ Արցախի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ, որով աջակցություն է հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին, ինչպես նաև շեշտում, որ Արցախի իշխանությունները պետք է մասնակցեն ցանկացած հարցի քննարկման, որոնք վճռորոշ կլինեն՝ երկրի ապագայի համար:

#### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Շարունակվել են աշխատանքները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ:

Արտգործնախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները, Մփյուռքի կառույցների հետ համատեղ, շարունակել են հետևողական ջանքեր գործադրել՝ Հայաստանում և արտերկրում Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման ուղղությամբ՝ ի կատարումն ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրի և հանձնարարականների:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ աջակցությամբ Հայոց Ցեղասպանության 99-րդ տարելիցի կապակցությամբ բազմաթիվ երկրներում անց են կացվել ոգեկոչման և հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, կազմակերպվել են կոնֆերանսներ և ցուցահանդեսներ:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը բավարարել է Հայաստանի դիմումը՝ Հայոց ցեղասպանության ժխտման վերաբերյալ իր կողմից քննվող « Պե ր ի ն չ ե կ ն ը ն դ դ ե մ Ե վ ե յ ց ա ր ի ա յ ի Հ ա մ ա դ ա շ ն ու թ յ ան » գործում՝ ՀՀ-ը որպես երրորդ շահագրգիռ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Ապրիլի 11-ին Միացյալ Նահանգների Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից ընդունվել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 410 բանաձևը:

Մեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունել է Ցեղասպանության ժխտումը քրեականացնող՝ «Այլատյացության դեմ պայքար» անվամբ օրինագիծը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում՝ հրեաների, հայերի և Պոնտոսի հույների ցեղասպանության ժխտման համար:

Նոյեմբերի 30-ին Բուլղարիայի Սենատի և Պատգամավորների պալատի կողմից ընդունվել է Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը:

Մարտի 7-ին Միավորած ազգերի կազմակերպության ժնկյան կենտրոնակայանում Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը նախագահել և ելույթ է ունեցել Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին Կոնվենցիայի 65 ամյակին նվիրված՝ շուրջ վեց տասնյակ երկրների մասնակցությամբ բարձրաստիճան քննարկմանը, որը գումարվել էր 2013 թ. Հայաստանի նախաձեռնությամբ Մարդու իրավունքների խորհրդի կողմից կոնսենսուսով ընդունված ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևի համաձայն:



Ապրիլի 1-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում ելույթ է ունեցել Ռուսաստանի ցեղասպանության քսաներորդ տարեկիցին նվիրված՝ Ցեղասպանությունների կանխարգելմանը նվիրված «Պաշտպանելու պատասխանատվությունը» խորագրով միջազգային համաժողովին:

#### Ռուսաստանի Դաշնություն

Տարին նշանավորվել է Ռուսաստանի Դաշնության հետ դաշնակցային ռազմավարական հարաբերությունների առավել սերտացմամբ և խորացմամբ:

Երկու երկրների բարձրագույն ղեկավարության միջև երկկողմ և բազմակողմ ձևաչափերում կայացած շուրջ մեկ տասնյակ հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել ռազմավարական նշանակություն ունեցող պայմանավորվածություններ՝ քաղաքական, արտաքին քաղաքական փոխգործակցության, ռազմական, ռազմատեխնիկական, առևտրատնտեսական, Հայաստանի տնտեսության արդիականացման և դիվերսիֆիկացիայի ապահովման, էներգետիկ, ներառյալ՝ միջուկային, տրանսպորտի, հաղորդակցությունների, ենթակառուցվածքների զարգացման, հումանիտար և այլ ոլորտներում համագործակցության խորացման ու ընդլայնման վերաբերյալ:

Փետրվարի 7-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Սոչիում ներկա է գտնվել Ձմեռային օլիմպիական 22-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությանը:

Մայիսի 8-ին և օգոստոսի 9-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այցելություններ է կատարել Ռուսաստանի Դաշնություն և հանդիպումներ ունեցել ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Քննարկվել են ռազմավարական գործընկեր երկու երկրների միջև հարաբերությունների առավել ամրապնդման ու խորացման ուղղությամբ հետագա քայլերը:

Հուլիսի 6-7-ը տեղի է ունեցել ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Մահալյանի պաշտոնական այցը Մոսկվա, որի շրջանակներում հանդիպումներ են կայացել ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի և Պետական Դումայի նախագահ Սերգեյ Նարիշկինի հետ:

Պարբերական բնույթ են կրել նաև հանդիպումները երկու երկրների կառավարությունների ղեկավարների մակարդակով: Փետրվարի 24-ին և հուլիսի 11-ին Սոչիում, մայիսի 30-ին Մինսկում կայացել են ՀՀ վարչապետի և ՌԴ կառավարության նախագահի հանդիպումները:

Հուլիսի 11-ին Սոչիում ստորագրվել է համաձայնագիր, որով դյուրացվում է երկու երկրների քաղաքացիների միմյանց տարածքներում գտնվելու ընթացակարգը:

Դեկտեմբերի 20-ին ստորագրվել է ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին համաձայնագիրը:

2014թ. երկկողմ և բազմակողմ ձևաչափերով Հայաստանի և Ռուսաստանի արտգործնախարարները ունեցել են մեկ տասնյակից ավելի հանդիպում:

Հունիսի 23-ին կայացել է Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի պաշտոնական այցը Հայաստան:

Պարբերական բնույթ են կրել տարբեր քաղաքական խորհրդատվությունները երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

Շարունակվել է հայ-ռուսական միջխորհրդարանական ակտիվ համագործակցությունը:

Հունիսի 5-ին Նիժնի Նովգորոդում և հոկտեմբերի 30-ին Երևանում անցկացվել են հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի հերթական 24-րդ և 25-րդ նիստերը:

Բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների և ապակենտրոնացված մակարդակներով, ընդլայնվել են ապակենտրոնացված և հումանիտար կապերը:

#### Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Շարունակել է զարգանալ հայ-ամերիկյան բարեկամական գործընկերությունը: Մեյսոնների 26-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Նյու Յորքում հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Վիկտորիա Նուլանդի հետ:

ԱՄՆ Կոնգրեսում տեղի են ունեցել Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի և Արցախի Հանրապետության անկախությանը նվիրված միջոցառումներ:

Ապրիլի 24-25-ը ԱՄՆ Կոնգրեսի պատվիրակությունը՝ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսի գլխավորությամբ, այցելել է Հայաստան: Պատվիրակությանն ընդունել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, հանդպում է կայացել նաև ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի հետ: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կոնգրեսականները մասնակցել են Մեծ Եղեռնի զոհերի ոգեկոչման արարողությանը:

Ի կատարումն 2013թ. ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի միջև ձեռք բերված պայմանավորվածության՝ 2014թ. ուժի մեջ մտավ ԱՄՆ քաղաքացիներին ՀՀ մուտքի արտոնագրի պահանջից ազատելու, իսկ ՀՀ քաղաքացիներին մինչև 10 տարի ժամկետով ԱՄՆ մուտքի արտոնագրեր տրամադրելու վերաբերյալ կարգը:

#### Եվրոպական Միություն

Արտաքին քաղաքականության օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել ԵՄ հետ հարաբերությունների խորացումը:

Հունվարի 1-ից ուժի մեջ են մտել ԵՄ հետ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման և Ռեադմիսիայի մասին համաձայնագրերը:

Ոլորտային բնագավառներում Եվրոպական Միության հետ համագործակցությունն ընդլայնելու նպատակով մարտի 1-ից ուժի մեջ է մտել Եվրոպական Միության ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ արձանագրությունը, որը Հայաստանին հնարավորություն է ընձեռնում մասնակցելու ԵՄ տարբեր ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին:

Հուլիսի 22-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում մասնակցել է Եվրոպական Միության և Արևելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպմանը:

Հոկտեմբերի 28-30-ը տեղի է ունեցել Եվրոպական Միության խորհրդի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով աշխատանքային խմբի այցելությունը Հայաստան:

Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Ջալբերը հուլիսին և հոկտեմբերին այցելել է Հայաստան:

Դեկտեմբերի 19-ին Հայաստան է այցելել Եվրոպական խորհրդարանի փոխնախագահ Ռիչարդ Չառնեցկին:

Բրյուսելում դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ Համագործակցության կոմիտեի 15-րդ նիստը, իսկ դեկտեմբերի 11-ին՝ Հայաստանի և Եվրոպական Միության միջև մարդու իրավունքների շուրջ երկխոսության 6-րդ հանդիպումը:

Փետրվարի 5-6-ը Ստրասբուրգում կայացել է Հայաստան-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի տասնչորսերորդ նիստը:

Նոյեմբերի 3-ին Բրյուսելում ՀՀ Էկոնոմիկայի նախարար Կարեն Զյմարիտյանը և Եվրամիության ընդլայնման և հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Յոհանես Հանը ստորագրել են ԵՄ կողմից 2014-2017թթ. Հայաստանին տրամադրվելիք աջակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը:

#### Եվրոպական երկրներ

Հայաստանի և Եվրոպական երկրների միջև իրականացվել է քաղաքական ակտիվ երկխոսություն, կայացել են բարձրաստիճան և այլ մակարդակների փոխայցելություններ, աշխատանքներ են տարվել՝ խորացնելու համագործակցությունը քաղաքական, առևտրատնտեսական, միջխորհրդարանական, կրթամշակութային, ապակենտրոնացված համագործակցության և այլ ոլորտներում:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պետական այց է կատարել Չեխիա, պաշտոնական այցեր՝ Ավստրիա և Սուրբ Աթոռ, աշխատանքային այցեր՝ Ֆրանսիա, Իռլանդիա, Բելգիա և Նիդերլանդներ:

Նախագահ Սերժ Սարգսյանը հունվարի 30-ին Պրահայում հանդիպում է ունեցել Չեխիայի Նախագահ Միլոշ Զեմանի հետ: Այցելության ընթացքում ստորագրվել են 12 երկկողմ փաստաթղթեր:

Հունիսի 11-ին ՀՀ Նախագահի՝ Ավստրիայի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում տեղի են ունեցել Սերժ Սարգսյանի և Ավստրիայի Նախագահ Հայնց Ֆիշերի բանակցությունները: Հանդիպման ավարտին ստորագրվել է 3 փաստաթուղթ:

Մարտի 25-ին աշխատանքային այցով Հաագայում գտնվող ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռուտեի հետ:

Մայիսի 12-13-ը տեղի է ունեցել Ֆրանսիայի Հանրապետության Նախագահ Ֆրանսուա Օլանդի պետական այցը Հայաստան: Ձեռք են բերվել պայմանավորվածություններ, որոնք

նոր մակարդակի կրթարձարցնեն հայ-ֆրանսիական առանձնաշնորհյալ հարաբերությունները:

Հունիսի 3-4-ը տեղի է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի Համադաշնության Նախագահ Դիդիե Բուրկհալտերի պաշտոնական այցը Հայաստան:

Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը պետական այցով Հայաստան է ժամանել Հունաստանի Հանրապետության Նախագահ Կարոլոս Պապուլիասը:

Հոկտեմբերի 10-12-ը Հայաստան պաշտոնական այց է կատարել Սերբիայի Հանրապետության Նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը:

Փետրվարին և նոյեմբերին Հայաստան են այցելել Հունաստանի Խորհրդարանի և Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահները:

Տեղի են ունեցել խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելություններ, այդ թվում՝ Չեխիա է այցելել ՀՀ ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովի գլխավորած պատվիրակությունը, Հայաստան այց են կատարել Գերմանիայի Բունդեսթագի, Ֆրանսիայի Ազգային ժողովի և Սենատի, Նիդերլանդների, Բուլղարիայի, Լեհաստանի, Լիտվայի խորհրդարանների պատվիրակությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են այցելել Եվրոպական խորհրդարանի, Ֆրանսիայի, Լիտվայի, Իսպանիայի օրենսդիր մարմինների անդամները:

Կայացել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական և աշխատանքային այցերը մի շարք եվրոպական երկրներ, այդ թվում՝ Գերմանիա, Ֆրանսիա, Շվեդիա, Լատվիա, Բելգիա, Սերբիա, Շվեյցարիա:

Ապրիլի 2-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն աշխատանքային այց է կատարել Բրյուսել, հանդիպում ունեցել Բելգիայի փոխվարչապետ, ԱԳ նախարար Դիդյե Ռեյնդերսի հետ:

Հունիսի 16-17-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այց է կատարել Գերմանիա, հանդիպել ԱԳ նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ: Փետրվարին և հոկտեմբերին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա, հանդիպումներ ունեցել Ֆրանսիայի ԱԳ նախարար Լորան Ֆաբիուսի հետ: Հայաստանի և Ֆրանսիայի արտգործնախարարները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային համաժողովների շրջանակներում:

Նոյեմբերին կայացել է ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնական այցը Շվեդիա, հանդիպումը արտգործնախարար Մարգոտ Վալստոբմի հետ:

Հունիսի 26-27-ը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն աշխատանքային այց է կատարել Լատվիայի Հանրապետություն, հանդիպել ԱԳ նախարար Էդգարս Ռինկևիչի հետ:

Հայաստան են այցելել եվրոպական երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարներ, այդ թվում՝ ԳԴՀ ԱԳ դաշնային նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը, Ավստրիայի արտաքին գործերի դաշնային նախարար Սեբաստիան Կուրցը, Միացյալ Թագավորության Եվրոպայի հարցերով պետական նախարար Դեյվիդ Լիդինգթոնը, Շվեյցարիայի Համադաշնության արտաքին հարաբերությունների դաշնային դեպարտամենտի ղեկավար Դիդիե Բուրկհալտերը, Լիտվայի ԱԳ նախարար Լինաս

Լինկյավիչուսը, Սերբիայի ԱԳ նախարար Իվան Մրկիչը, Լատվիայի ԱԳ նախարար Էդգար Ռինկևիչը:

Կայացել է Շվեդիայի Առևտրի և հյուսիսային համագործակցության նախարար Էվա Բյորլինգի այցելությունը Հայաստան:

Միջազգային համաժողովների և բազմակողմ այլ ֆորումների շրջանակներում կայացել են ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Ֆինլանդիայի, Իտալիայի, Էստոնիայի, Մալթայի, Հունաստանի, Ռումինիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարների և Կոսովոյի նախագահ Աթիֆեթե Յահյազայի հետ:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Դանիայի, Լատվիայի, Չեխիայի, Ռումինիայի և Լեհաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների հետ:

Կայացել են հայ-գերմանական, հայ-ավստրիական, հայ-չեխական, հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովների նիստերը և հայ-ֆրանսիական, հայ-ավստրիական, հայ-չեխական, հայ-լեհական, հայ-սերբական և հայ-հունական գործարար համաժողովները:

2014թ. պաշտոնապես բացվել են Հայաստանի դեսպանությունը Շվեդիայում և Հայաստանում Շվեդիայի դեսպանությունը:

## ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

### ՎՐԱՍՏԱՆ

2014թ-ին հայ-վրացական հարաբերությունները զարգացել և ամրապնդվել են՝ նկատելի առաջընթաց արձանագրելով մի շարք ոլորտներում: Տեղի են ունեցել տարբեր մակարդակների ավելի քան երկու տասնյակ փոխայցելություններ:

Փետրվարի 27-28-ը պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Վրաստանի Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, իսկ հունիսի 18-19-ը երկօրյա պաշտոնական այցով Վրաստան է այցելել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Հոկտեմբերի 6-8-ը պաշտոնական այցով Վրաստանում է գտնվել ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորած պատվիրակությունը:

Օգոստոսի 21-22-ը կայացել է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլիի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, իսկ դեկտեմբերի 11-12-ը Վրաստան է այցելել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը:

Վրաստան են այցելել նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը, ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը: Վրացական կողմից տեղի են ունեցել պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի և ներքին գործերի նախարար Ալեքսանդր Չիկաիձեի այցերը:

Հունիսի 11-12-ը Երևանում կայացել են ՀՀ ԱԳՆ-ի և Վրաստանի ԱԳՆ-ի միջև քաղաքական խորհրդակցությունները:

Դեկտեմբերին Բազելում տեղի ունեցել Հայաստանի և Վրաստանի արտգործնախարարների հանդիպումը:

Իրան

Բնականոն զարգացում են ապրել Հայաստան-Իրան փոխշահավետ հարաբերությունները:

Հոկտեմբերի 20-21-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի պաշտոնական այցը Իրան, որի ընթացքում ՀՀ վարչապետը հանդիպումներ է ունեցել ԻԻՀ նախագահի, նախագահի առաջին տեղակալի և ԱԳ նախարարի հետ:

Մայիսի 5-ին Իրանի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆի հրավերով պաշտոնական այցով Թեհրան է մեկնել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Այցի ընթացքում Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի, Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի և ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆի հետ:

Դեկտեմբերի 15-16-ը Թեհրանում տեղի է ունեցել հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի տասներկուերորդ նիստը:

Տեղի են ունեցել նաև քաղաքական, իրավական, մշակութային և այլ ոլորտներում համագործակցությանը նվիրված մի շարք միջգերատեսչական փոխայցելություններ և հանդիպումներ:

Թուրքիա

Թուրքիայի ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով Հայաստան-Թուրքիա հարաբերություններում որևէ տեղաշարժ չի եղել:

Տարվա ընթացքում միջազգային հանրությունը տարբեր առիթներով վերահաստատել է հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորմանը Հայաստանի սկզբունքային դիրքորոշմանն իր աջակցությունը:

Օգոստոսի 28-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Անկարայում ներկա է գտնվել Թուրքիայի նորընտիր Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի պաշտոնի ստանձնման արարողությանը: Պատվիրակությունների ղեկավարների պատվին տրված ընդունելության ընթացքում նախարար Նալբանդյանը կարճատև զրույց է ունեցել Թուրքիայի նախագահի հետ, որին հանձնել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական հրավերը՝ 2015թ. ապրիլի 24-ին ներկա գտնվելու Երևանում կայանալիք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը:

Սեպտեմբերի 24-ին, ՄԱԿ ԳԱ 69-րդ նստաշրջանին, Նախագահ Սերժ Սարգսյանը, նշեց, որ թեև Հայաստանը Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումը վերջինիս հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու նախապայման չի դիտարկում, բայց հաշվի առնելով Թուրքիայի կողմից հարաբերությունների հաստատման համար նախապայմանների առաջ քաշումը, ինչպես նաև Հայոց Ցեղասպանության ժխտման քաղաքականության ահագնացումը, հայտարարեց, որ պաշտոնական Երևանը լրջորեն քննարկում է հայ-թուրքական արձանագրությունները խորհրդարանից հետ կանչելու հարցը:

## ԱՊՀ

Համագործակցությունը ԱՊՀ շրջանակներում շարունակել է մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Հայաստանն իր ակտիվ և գործնական մասնակցությունն է ունեցել ԱՊՀ կառույցում ծավալվող գործընթացներում:

Տարվա ընթացքում նախապատրաստվել և ստորագրվել են տնտեսական, ռազմական, քաղաքական, հումանիտար, սոցիալական և այլ ոլորտների վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև համապատասխան ծրագրեր՝ միտված նշյալ ոլորտների շրջանակներում ընդունված որոշումների իրականացմանը:

Հաշվետու տարում կայացել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստը (հոկտեմբերի 10-ին Մինսկում), ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի մասնակցությամբ՝ ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերը (մայիսի 30-ին Մինսկում և նոյեմբերի 21-ին Աշխաբադում), ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի մասնակցությամբ՝ Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի 2 նիստ (ապրիլի 4-ին Մոսկվայում և հոկտեմբերի 9-ին Մինսկում):

Հումանիտար համագործակցությունը, ինչպես և նախորդ տարիներին, շարունակել է պահպանել իր առաջնային կարևորությունը համագործակցության շրջանակներում: Տարվա ընթացքում կայացած նիստերին հավանության են արժանացել հումանիտար բնագավառում 2015-2016թթ. ԱՊՀ շրջանակներում իրականացվելիք համագործակցության ծրագիրն ու մինչև 2020թ. զբոսաշրջության ոլորտում համագործակցության զարգացման ռազմավարության իրականացման 2015-2017թթ. միջոցառումների ծրագիրը: Հայաստանի համար նշանակալից է եղել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին գրավոր ժառանգության պահպանման և վերականգնման ոլորտում ԱՊՀ բազային կազմակերպության կարգավիճակ շնորհելու մասին որոշման ընդունումը:

Ընթացիկ տարում կայացած նիստերի օրակարգերում ներառված առաջնային հարցերից են եղել նաև ԱՊՀ մասնակից երկրների արտաքին սահմանների պահպանության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտներում համագործակցության, իրավապահ մարմինների միջև փոխգործակցության վերաբերյալ փաստաթղթերը: Քննարկվել և ընդունվել է ապօրինի միգրացիայի դեմ հակազդեցության բնագավառում ԱՊՀ մասնակից երկրների 2015-2019թթ. համագործակցության ծրագիրը:

Քայլեր են ձեռնարկվել տնտեսական բնագավառում ազատ առևտրի գոտու լիակատար ձևավորումն ապահովելու ուղղությամբ:

Տարվա ընթացքում Հայաստանում անցկացվել է ԱՊՀ ճյուղային մարմինների 12 միջոցառում:

## ԵՎՐԱՍՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում կարևորագույն իրադարձությունը ՀՀ կողմից Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) միանալու գործընթացի հաջող ավարտն էր, ինչը բխում

է Հայաստանի ռազմավարական շահերից, նոր հնարավորություններ է բացում երկրի տնտեսական զարգացման համար:

2014թ. մայիսի 29-ին Աստանայում ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ստեղծման մասին պայմանագիրը, իսկ հոկտեմբերի 10-ին կառույցի հիմնադիր փաստաթղթին Հայաստանի միանալու մասին պայմանագիրը:

Դեկտեմբերին Հայաստանի, ինչպես նաև Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի խորհրդարանների կողմից վավերացվել է Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014թ. մայիսի 29-ին համաձայնագրին միանալու մասին պայմանագիրը:

Տարվա ընթացքում կայացել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ նախագահների մակարդակով երեք նիստ՝ մայիսի 29-ին Աստանայում, հոկտեմբերի 10-ին Մինսկում և դեկտեմբերի 23-ին Մոսկվայում, որոնց մասնակցել է ՀՀ Նախագահը: Կայացել է նաև կառավարության ղեկավարների մակարդակով երկու նիստ՝ մայիսի 30-ին Մինսկում և նոյեմբերի 21-ին Աշխաբադում, որոնցում ևս ներկայացված է եղել Հայաստանը վարչապետի մակարդակով:

#### ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐ

Քայլեր են ձեռնարկվել Բելառուսի Հանրապետության հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: Մայիսի 30-ին Մինսկում ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերի շրջանակներում կայացել է ՀՀ և ԲՀ վարչապետերի հանդիպումը:

Ապրիլի 21-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Բելառուսի Հանրապետություն: Տեղի են ունեցել հանդիպումներ ԲՀ նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի և ԲՀ ԱԳ նախարար Վլադիմիր Մակեյի հետ: Այցի շրջանակներում ՀՀ և ԲՀ ԱԳ նախարարները ստորագրել են երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև 2014-2015 թթ. խորհրդատվությունների ծրագիրը:

Տարվա ընթացքում ՀՀ և ԲՀ ԱԳ նախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել նաև բազմակողմ ձևաչափերում:

Նոյեմբերի 25-27-ը Մինսկում կայացել են Հայաստանի և Բելառուսի ԱԳ նախարարությունների միջև հերթական խորհրդատվությունները՝ արտաքին գերատեսչությունների ղեկավարների տեղակալների մակարդակով:

Հոկտեմբերի 23-25-ը Մինսկում անցկացվել է Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը: Այցի շրջանակում ՀՀ Էկոնոմիկայի նախարար Կ.ՃՂմարիտյանը հանդիպումներ է ունեցել ԲՀ փոխվարչապետ Պ.Պրոկոպովիչի, ԲՀ անտառային տնտեսության նախարար Մ.Ամելյանովիչի, ԲՀ Էկոնոմիկայի նախարար Ն.Մնոպկովի հետ:

Տարբեր մակարդակներում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանի և Բելառուսի միջև քաղաքական երկխոսությանը, առևտրատնտեսական փոխգործակցությանը, հումանիտար ոլորտում հարաբերությունների խորացմանը, ինչպես նաև ՀՀ և ԲՀ մարզերի միջև համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր:



Շարունակվել է հայ-բելառուսական համագործակցության խորացումը մշակութային, գիտական և կրթական ոլորտներում: Հոկտեմբերի 15-20-ը Հայաստանում անցկացվել են Բելառուսի մշակույթի օրերը, որոնց շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Բելառուսի Հանրապետության մշակույթի նախարարության միջև 2014-2017թթ. մշակութային համագործակցության մասին» ծրագիրը:

Զարգացում է ապրել միջխորհրդարանական համագործակցությունը: Սեպտեմբերի 13-ին Երևանում կայացել է ՀՀ ԱԺ և ԲՀ ԱԺ միջև միջխորհրդարանական համագործակցության Հանձնաժողովի 8-րդ նիստը:

Ընթացիկ տարում քայլեր են ձեռնարկվել Ուկրաինայի հետ հարաբերությունների զարգացումն ապահովելու ուղղությամբ:

Հունիսի 7-ին Ուկրաինայի նորընտիր Նախագահ Պ.Պորոշենկոյի երդմնակալության արարողությանը մասնակցել է ՀՀ պատվիրակությունը՝ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի գլխավորությամբ:

Դեկտեմբերի 15-19-ը կայացել է ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ Ի.Զաքարյանի այցը Մոլդովա: Այցի շրջանակներում ստորագրվել է համագործակցության մասին հուշագիր երկու երկրների վերահսկիչ պալատների միջև:

Հայ-ղազախական հարաբերությունները շարունակել են բնականոն զարգացում ապրել: Մայիսի 29-ին Աստանայում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ընդլայնված կազմով նիստին:

Հայ-ղազախական մշակութային հարաբերությունների զարգացման և խորացման համար կարևոր էր հոկտեմբերի 7-9-ը ՂՀ մշակույթի նախարար Ա.Մուխամեդովի այցը Հայաստան, որի ընթացքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության միջև 2015-2017թթ. համագործակցության ծրագիրը:

Ընթացիկ տարում շարունակվել են պարբերական շփումները Ղրղզստանի հետ ինչպես երկկողմ մակարդակում, այնպես էլ՝ ԱՊՀ, ՀԱՊԿ և այլ միջազգային կառույցների շրջանակներում:

Խորացվել և ամրապնդվել են ավանդական սերտ բարեկամական հարաբերությունները Թուրքմենստանի հետ:

Ապրիլի 7-9-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Թուրքմենստան: Այցի շրջանակներում ստորագրվել են երկկողմ փոխշահավետ համագործակցության զարգացմանը նպաստող մի շարք փաստաթղթեր: Տեղի են ունեցել Հայաստան-Թուրքմենստան գործարար համաժողովն (ապրիլի 8-9-ը) ու հայկական բազմաոլորտային ցուցահանդեսը, Աշխաբադ և Թուրքմենբաշի քաղաքներում անցկացվել են Հայաստանի մշակութային օրերը (ապրիլի 9-11-ը):

Աշխաբադում կայացած ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների նիստի շրջանակներում նոյեմբերի 20-ին կայացել է ՀՀ վարչապետի հանդիպումը Թուրքմենստանի Նախագահի հետ: Հանդիպմանը քննարկվել են հայ-թուրքմենական համագործակցության զարգացման հեռանկարները:

Ակտիվ աշխատանքներ են տարվել երկկողմ առևտրատնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ: Դեկտեմբերի 22-24-ը Երևանում կայացել է ՀՀ և Թուրքմենստանի միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 6-րդ նիստը:

Դեկտեմբերի 24-ին Երևանում կայացել են Հայաստանի և Թուրքմենստանի արտաքին գործերի նախարարությունների միջև խորհրդատվությունները:

Տաջիկստանի հետ քաղաքական շփումների բնականոն ընթացքի ապահովմանը նպաստել են փոխշփումներն ու հանդիպումները կայացած մի շարք միջազգային համաժողովների շրջանակներում:

## ԱՍԻԱԿԱՆ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

2014 թվականին Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների ընթացքն առանձնացել է տարբեր ոլորտներում համագործակցության խորացման գործնական քայլերով: Հատկապես կարևոր նշանակություն է տրվել Չինաստանի, Ճապոնիայի և Հնդկաստանի հետ փոխադարձ շփումներին ու գործակցությանը:

Տարվա ընթացքում Չինաստան են այցելել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա.Երիցյանը և ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա.Ջավադյանը: Հայաստան են այցելել Չինաստանի Կոմունիստական Կուսակցության պատվիրակությունը ՉԿԿ ԿԿ Միջազգային բաժնի վարիչի տեղակալ, փոխնախարար Ճոու Լիի գլխավորությամբ և Կանանց Համաչինական ֆեդերացիայի պատվիրակությունը՝ ՉԺՀ Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի անդամ Յուի Խոնգյուի գլխավորությամբ:

Աճ է արձանագրվել Հայաստանից Չինաստան արտահանման ծավալներում, որոնք հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում կազմել են 132 մլն. ԱՄՆ դոլար:

Ստորագրվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՉԺՀ զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի միջև Չինաստանի զբոսաշրջիկների՝ Հայաստան խմբային ճանապարհորդության դյուրացման մասին փոխըմբռնման հուշագիրը: Սեպտեմբերին Հայաստանը մասնակցել է Ուրումչիում կայացած «Չինաստան-Եվրասիա» ցուցահանդեսին: Շանհայում կայացած «SIAL CHINA 2014» սննդի միջազգային տոնավաճառում տեղի է ունեցել հայկական արտադրանքի շնորհանդես:

Շարունակվել են ՉԺՀ կառավարության կողմից հատկացվող տեխնիկատնտեսական օժանդակության ծրագրերը: Ավարտվել են Երևանում չինարենի խորացված ուսուցմամբ դպրոցի նախագծի նախապատրաստական աշխատանքները:

ՀՀ ԱԳՆ, էկոնոմիկայի նախարարության և ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանության համագործակցությամբ սեպտեմբերին անցկացվել է «Incredible India» զբոսաշրջության բնագավառին նվիրված սեմինարը, ուր ներկայացվել են զբոսաշրջության ոլորտում հայ-հնդկական համագործակցության հնարավորությունները: Ստորագրվել է ՀՀ կառավարության և Հնդկաստանի Հանրապետության միջև Հայաստանում հեռաբժշկության ցանց ստեղծելու մասին փոխըմբռնման հուշագիր: Փետրվարին Երևանում կայացել է Հայաստանի և Հնդկաստանի դեղագործական արդյունաբերության գործարար համաժողով: Մայիսին դեղագործության ոլորտի հայկական 10

ընկերությունների ներկայացուցիչներ մասնակցել են Հնդկաստանի Մումբայ քաղաքում տեղի ունեցած դեղագործական «IPHEX-2014» միջազգային ցուցահանդեսին:

Հոկտեմբերին Երևանում բացվել է Ճապոնիայի դեսպանության ժամանակավոր գրասենյակը: Հունիսին Ճապոնիայի կառավարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջև կնքվել է 1.9 մլն. ԱՄՆ դոլարի դրամաշնորհ տրամադրելու մասին համաձայնագիրը: Հունվարին Տոկիոյում կայացել են հայ-ճապոնական քաղաքական խորհրդատվություններ: Հունիսին կայացել է Երևանում Հիրոշիմայի «Խաղաղության քար» հուշարձանի բացման արարողությունը: Տեղի է ունեցել նաև ճապոնական «Հիկարի» մշակութային կենտրոնի բացումը:

Փետրվարի 4-ին Ինդոնեզիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առաջին դեսպան Աննա Ադաջանյանն իր հավատարմագրերն է հանձնել Ինդոնեզիայի Նախագահ Սուսիլո Յուդհոյոնոյին: Հունիսին Երևանում կայացել է «Պատուհան դեպի Ինդոնեզիա» միջոցառումների շարքը, որոնք ներառում էին Ինդոնեզիայի տնտեսության ու ներդրումային հնարավորություններին նվիրված շնորհանդես, ինդոնեզական ապրանքների ցուցահանդես, երկկողմ գործարար հանդիպումներ, ինդոնեզական ձեռագործության ցուցադրական դասընթաց, խոհարարական արվեստի ցուցահանդես, նորաձևության ցուցադրություն: Գործարար հանդիպումներին մասնակցել են Ինդոնեզիայից Հայաստան ժամանած 8 ընկերությունների մոտ 100 ներկայացուցիչներ:

Ստորագրվել է ՀՀ կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, սպորտի և կրթության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիրը: Հուլիսին Մեուլում կայացել է «Կովկասյան մշակութային փառատոնը», որին մասնակցել են Հայաստանի մշակութային համայնքները և արվեստագետները:

Բնականոն կերպով շարունակվել է քաղաքական երկխոսությունը Վիետնամի հետ:

Քաղաքական խորհրդակցություններ են անցկացվել Չինաստանի, Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության և Ավստրալիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների հետ:

Քայլեր են ձեռնարկվել տարածաշրջանի երկրների հետ միջխորհրդարանական կապերի ակտիվացման ուղղությամբ: Տեղի են ունեցել ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատվիրակությունների այցերը Ճապոնիա և Չինաստան:

## ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել Մերձավոր Արևելքի երկրների հետ ավանդական բարեկամական հարաբերությունների պահպանման և զարգացման ուղղությամբ:

Հոկտեմբերի 29-30-ը Հորդանանի թագավոր Աբդալլահ Երկրորդի հրավերով տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Հորդանանի Հաշիմյան Թագավորություն:

Հանրապետության Նախագահը հանդիպումներ է ունեցել Հորդանանի թագավոր Աբդալա երկորդի, նաև՝ ՀՀԹ խորհրդարանի նախագահի, Սենատի նախագահի, վարչապետի և հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Այցի ընթացքում ստորագրվել է երկկողմ համագործակցությունը խթանող տասնմեկ իրավական փաստաթուղթ:

Նոյեմբերի 30-ին Դակարում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովի ընթացքում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել Եգիպտոսի վարչապետ Իբրահիմ Մահլաբի հետ: Հունիսի 2-ին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության և Զարգացման հայկական գործակալության հետ համատեղ կազմակերպել է հայ-եգիպտական բիզնես ֆորում: Կողմերի միջև ստորագրվել է հուշագիր համագործակցության մասին:

Սփյուռքի նախարարության հետ համատեղ հետևողական աշխատանքներ են իրականացվել սիրիահայության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Ծայրահեղականների կողմից մարտի 21-ին Սիրիայի հայաբնակ Քեսաբ գյուղաքաղաքի վրա հարձակումից հետո մարտի 25-ին Սիրիա է մեկնել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորական պատվիրակությունը: ՀՀ պատվիրակությունը Դամասկոսում հանդիպում է ունեցել ՄԱՀ նախագահ Բաշար ալ-Ասադի հետ:

Աշխատանքներ են ձեռնարկվել Քեսաբում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով տուժած սիրիահայությանը օժանդակություն ցուցաբերելու, Քեսաբի շուրջ ստեղծված իրավիճակը միջազգային ատյաններում պատշաճ ներկայացնելու և համապատասխան արձագանք ապահովելու ուղղությամբ:

Միջազգային ատյաններում Հայաստանը հետևողականորեն բարձրացրել է Իրաքի հյուսիսում, ընդհանրապես Մերձվոր Արևելքում ծայրահեղականների բռնությունների հետևանքով ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների ռոնահարմանը վերջ դնելու նպատակով միավորվելու կարևորությունը:

Բնականոն կերպով շարունակվել է քաղաքական երկխոսությունը Լիբանանի հետ:

Շարունակվել է Իրաքի հետ համագործակցության վերջին տարիներին ձևավորված դրական դինամիկան: Փետրվարի 16-17-ը Իրաքի ԱԳ նախարար Հոշիյար Ջիբարիի հրավերով տեղի է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Իրաք, որի շրջանակներում հանդիպումներ են կայացել Իրաքի Հանրապետության փոխնախագահի, վարչապետի և արտգործնախարարի հետ:

Հայաստանը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջոցով Հյուսիսային Իրաքի Սինջարի տեղահանված բնակչությանը մարդասիրական օժանդակություն է տրամադրել:

Հունվարի 29-ին կայացել է ՀՀ ԱԺ նախագահի աշխատանքային այցը ԱՄԷ: Հունվարի 13-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանի այցը ԱՄԷ քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

Հունիսի 3-ին Հայաստան է այցելել ԱՄԷ Աբու Դաբիի Էմիրության առևտրաարդյունաբերական պալատի պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի և փոխվարչապետ հետ:

Սեպտեմբերի 17-20-ը կայացել է Քուվեյթի խորհրդարանի հայ-քուվեյթյան բարեկամական խմբի այցը Հայաստան: Պատգամավորները հանդիպումներ են ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխարտգործնախարարի հետ:

Հունիսի 18-20-ը Հայաստանի և Իսրայելի ԱԳ նախարարությունների միջև խորհրդատվություններ անցկացնելու նպատակով Երևան է այցելել ԱԳՆ գլխավոր տնօրեն Աննա Ազարիի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում պատվիրակությունն այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Հուլիսի 8-10-ը Իսրայելում անց են կացվել Հայաստանի մշակույթի օրերը:

Հունիսին և նոյեմբերին Իսրայել են այցելել ՀՀ մշակույթի և ֆինանսների նախարարները:

### ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ և ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հուլիսի 30 - օգոստոս 1-ին Հայաստան է այցելել Կանադայի աշխատանքի և սոցիալական զարգացման և բազմամշակութայնության հարցերով նախարար Ջեյսոն Քենին: Տեղի են ունեցել նրա հանդիպումները ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, վարչապետի, ԱԳ և սփյուռքի նախարարների հետ:

Օգոստոս 25-27-ին Հայաստանում էր Կանադայի խորհրդարանական պատվիրակությունը, որին ընդունել են ԱԺ նախագահը, ԱԳ և Սփյուռքի նախարարները:

Տարվա ընթացքում էապես ակտիվացել են լատինաամերիկյան երկրների հետ քաղաքական շփումները: Տարածաշրջանի մի շարք պետությունների հետ համագործակցության հետագա խորացման ուղիների նախանշման առումով կարևոր նշանակություն են ունեցել ՀՀ Նախագահի՝ հուլիսին Արգենտինա, Ուրուգվայ և Չիլի, ինչպես նաև արտգործնախարարի՝ հունվարին Պերու, Պանամա և Կուբա կատարած այցերը:

Հուլիսի 6-8-ին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցն Արգենտինա: Այցի շրջանակներում ՀՀ Նախագահը հանդիպումներ է ունեցել Արգենտինայի փոխնախագահ, Սենատի նախագահի, Պատգամավորների պալատի նախագահի հետ, այցելել է Բուենոս Այրեսի քաղաքապետարան, այցելել է հայկական հաստատություններ:

Սեպտեմբերի 3-ին Երևանում կայացել են հերթական խորհրդակցությունները Հայաստանի և Արգենտինայի ԱԳ նախարարությունների միջև:

Հուլիսի 9-10-ին կայացել է ՀՀ Նախագահի պետական այցն Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն: Այցի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ ՈւԱՀ նախագահ Խոսե Մուխիկայի, փոխնախագահ-Սենատի նախագահի, Գերագույն դատարանի նախագահի հետ:

Դեկտեմբերի 6-12-ին Հայաստան է այցելել Ուրուգվայի փոխնախագահ, Սենատի նախագահ Դանիլո Աստորին, որին ընդունել են ՀՀ Նախագահը, ԱԺ նախագահը, վարչապետը, ԱԳ նախարարը:

Հուլիսի 10-12-ին տեղի է ունեցել ՀՀ Նախագահի պաշտոնական այցը Չիլի: Այցի օրակարգում էին հանդիպումներ Չիլիի նախագահ Միշել Բաչելետի, Չիլիի ազգային

կոնգրեսի ներկայացուցիչների պալատի նախագահի, Մանտիագոյի քաղաքապետի հետ: Այցի շրջանակներում Նախագահն այցելել է Մանտիագոյում գտնվող «Հայ տունը»:

Հունվարի 6-7-ին կայացել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Պերու: Տեղի են ունեցել հանդիպումներ ԱԳ նախարար Էդա Ռիվասի և Պերուի Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի հետ: Էդվարդ Նալբանդյանը ելույթով հանդես է եկել Պերուի ԱԳՆ-ում՝ դիվանագետների առջև:

Հունվարի 8-ին ՀՀ ԱԳ նախարարը ժամանել է Պանամա: Այցի ընթացքում նա հանդիպում է ունեցել իր պանամացի գործընկեր Ֆերնանդո Ֆարբեգայի և Պանամայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի հետ:

Հունվարի 10-12-ին արտգործնախարարը պաշտոնական այցով եղել է Կուբայում՝ հանդիպումներ ունենալով Կուբայի նախարարների խորհրդի փոխնախագահ Ռիկարդո Կաբրիսա Ռուիզի, ԱԳ նախարար Բրունո Ռոդրիգեզ Պարիյայի, արտաքին առևտրի և ներդրումների նախարարի, Կուբայի խորհրդարանի փոխնախագահի հետ:

Ապրիլի 1-ին Հայաստան է ժամանել Կուբայի Պետխորհրդի գիտության հարցերով խորհրդական Ֆիդել Կաստրո Դիաս-Բալարին, որին ընդունել են Նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Նոյեմբերի 2-8-ը Հայաստանն առաջին անգամ մասնակցել է Կուբայի մայրաքաղաքում անցկացվող Հավանայի միջազգային 32-րդ ցուցահանդեսին:

## ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՊԿ

Տարվա ընթացքում Հայաստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել Հավաքական անվտանգության մասին Պայմանագրի Կազմակերպության (ՀԱՊԿ) աշխատանքներին:

Դեկտեմբերի 23-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանին, որի ընթացքում ընդունվել է միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված հայտարարություն, որտեղ, մասնավորապես, նշվել է, որ. «ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնադրությունների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը»:

Հայաստանը մասնակցել է նաև ապրիլին, հունիսին և դեկտեմբերին կայացած արտաքին գործերի և պաշտպանության նախարարների խորհուրդների ու անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի նիստերին, որոնց ընթացքում ընդունվել են մի շարք փաստաթղթեր՝ ուղղված Կազմակերպության

ռազմաքաղաքական ներուժի ավելացմանը: Ապրիլին Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստի ժամանակ ընդունվել է Սիրիայի հայաբնակ Քեսաբի վրա ծայրահեղականների հարձակումը դատապարտող հայտարարություն:

Ադրբեջանական զինուժի կողմից ԼՂՀ ՊԲ ուսումնավարժական թռիչք իրականացնող ուղղաթիռի խոցումից հետո ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան հանդես է եկել դատապարտող հայտարարությամբ:

Սեպտեմբերին Նյու Յորքում՝ ՄԱԿ ԳԱ 69-րդ նստաշրջանի ընթացքում, իսկ դեկտեմբերին Բազելում՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի նախօրեին, տեղի են ունեցել ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպումները՝ նվիրված արտաքին քաղաքականության համադրման հարցերին:

Հայաստանը մասնակցել է ՀԱՊԿ շրջանակներում Ղազախստանում, Ղրղզստանում և Ռուսաստանում անցկացված գորավարժությունների:

Հուլիսին Երևանում կայացել է «ՄԱԿ սկզբունքների և չափանիշների հիման վրա ազգային և տարածաշրջանային խաղաղապահ ներուժի ինտեգրումը խաղաղապահ գործողությունների համընդհանուր համակարգ» խորագրով ՀԱՊԿ ռազմավարական քաղաքական համաժողովը:

ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան անցյալ տարվա փետրվարին, ապրիլին, հունիսին, հոկտեմբերին և նոյեմբերին այցելել է Հայաստան, հանդիպումներ ունեցել երկրի բարձրաստիճան ղեկավարների հետ:

## ՆԱՏՕ

Շարունակվել է Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների զարգացումը:

Մայիսի 23-ին ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի և Հայաստանի կողմից հաստատվել է Հայաստան-ՆԱՏՕ թվով 4-րդ ԱԳԳԾ 2014-2016թթ. փաստաթուղթը:

Սեպտեմբերի 4-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել և ելույթով հանդես է եկել Նյուպորտում (ՄԹ) կայացած ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ու Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցության ուժերի (ՄԱԱՌ) առաքելության մասնակից ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող պետությունների և կառավարությունների ղեկավարների հանդիպմանը:

Մայիսի 20-ին Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մասնակցել են Հյուսիսատլանտյան խորհուրդ-Հայաստան ձևաչափով նիստին: ՀՀ պատվիրակության հանդիպել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հետ:

Հունիսի 25-ին Բրյուսելում տեղի ունեցած Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցության ուժերին մասնակցող երկրների ԱԳ նախարարների հանդիպմանը մասնակցել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: ՀՀ ԱԳ նախարարը վերահաստատել է Հայաստանի հանձնառությունը՝ շարունակելու օժանդակությունը Աֆղանստանում անվտանգության և ներազգային համերաշխության հաստատման ուղղությամբ գործադրվող միջազգային հավաքական ջանքերին:

Դեկտեմբերի 2-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում մասնակցել է Աֆղանստանում «Հաստատական աջակցություն» առաքելության մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը:

2014թ. նոյեմբերի 10-14-ը՝ Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում, Հայաստանում անցկացվել է հերթական (թվով 8-րդ) «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումը:

#### ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը շարունակել է իր մասնակցությունը Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցության ուժերի (ISAF) գործողությանը, որն ավարտվել է 2014թ.: Հայաստանը Աֆղանստանում կմասնակցի 2015թ. հունվարից «Հաստատական աջակցություն» առաքելությանը:

Հայաստանի խաղաղապահները շարունակել են ծառայությունը Կոսովոյում իրականացվող գործողության շրջանակներում:

Հավատարիմ միջազգային անվտանգության ապահովման իր հանձնառություններին, Հայաստանը սկսել է իր ներգրավումը ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություններին: Նոյեմբերի 26-ին մեկնարկել է ՀՀ խաղաղապահ ստորաբաժանման մասնակցությունը Լիբանանի հարավում գործող UNIFIL առաքելությանը:

Հայաստանի և Ֆրանսիայի Նախագահների միջև պայմանավորվածություն է ձևեր բերվել աֆրիկյան տարածաշրջանում ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող խաղաղապահ գործողություններին ֆրանսիական զորախմբի կազմում հայկական կողմի մասնակցության մասին:

#### ԳԼՈՒԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Մարտի 24-25-ը Հաագայում կայացած միջուկային անվտանգության գագաթնաժողովին մասնակցել և ելույթով հանդես է եկել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Հունիսի 12-ին Ավստրիա կատարած այցի շրջանակներում ՀՀ Նախագահը հանդիպում է ունեցել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գործադիր տնօրեն Յուկիյա Ամանոյին, ում հետ քննարկվել է ԱԷՄԳ-ՀՀ երկկողմ համագործակցությունը:

Մայիսի 6-8-ը Երևանում տեղի է ունեցել Քիմիական զենքի արգելման կազմակերպության Արևելյան Եվրոպայի երկրների ազգային մարմինների ներկայացուցիչների 13-րդ տարածաշրջանային հանդիպումը, որին մասնակցել են 25 երկրների ներկայացուցիչներ:

Զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1540 բանաձևի դրույթների իրականացման շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության հաստատման է ներկայացվել 2014-2020թթ. Ազգային գործողությունների ծրագիրը:



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 23-26-ը ՄԱԿ-ի 69-րդ նստաշրջանի բացմանը մասնակցել և ելույթ է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը: Այցի շրջանակներում ՀՀ Նախագահը հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Պան Գի Մունի հետ:

Հունիսի 11-12-ին Ավստրիայի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի տնօրեն, ՄԱԿ-ի Վիեննայի գրասենյակի տնօրեն Յուրի Ֆեդոտովի հետ:

Սեպտեմբերի 28-30-ը Հայաստանում էր գտնվում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ադմինիստրատոր, ՄԱԿ-ի ԳՔ տեղակալ Հելեն Քլարկը, ով հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի, վարչապետի, ԱԳ նախարարի հետ:

Հոկտեմբերի 8-10-ը ՀՀ կառավարության հրավերով և ՄԱԿ Տնտեսական և Սոցիալական զարգացման դեպարտամենտի նախաձեռությամբ Երևանում հյուրընկալվել է «Կառավարության և կառավարման կարողությունները՝ հանուն կայուն զարգացման» միջազգային կոնֆերանսը, որին մասնակցել են 20-ից ավելի երկրների պատվիրակներ: Համաժողովի արդյունքում ընդունվել է Երևանյան հռչակագիրը:

Մարտի 5-7-ը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Ժնևում մասնակցել և ելույթ է ունեցել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 25-րդ նստաշրջանին:

Մայիսի 6-8-ը Հայաստանը ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի համաձայն ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին է ներկայացրել է իր երկրորդ և երրորդ պարբերական զեկույցները:

Շարունակվել է համագործակցությունը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ՝ ուղղված միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի իրականացմանը: Աշխատանքներ են տարվել 2013թ. օգոստոսի 8-ին Ադրբեջանում գերի ընկած հայ զինվոր Հակոբ Ինջիդուլյանի և Ադրբեջանում հայտնված ՀՀ մյուս քաղաքացիների Հայրենիք վերադարձի ուղղությամբ: Համատեղ ջանքերի և շահագրգիռ կողմերի կազմակերպված աշխատանքի արդյունքում հնարավոր է եղել կազմակերպել Հակոբ Ինջիդուլյանի վերադարձը:

Շարունակվել է սերտ համագործակցությունը Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում միջազգային, տարածաշրջանային, ինչպես նաև եկկոդ մակարդակով: Հունիսի 20-ին ԱՄՆ Պետքարտուղարությունը հրապարակել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ տարեկան զեկույցը, համաձայն որի՝ Հայաստանը երկրորդ տարին անընդմեջ մեր տարածաշրջանի, ինչպես նաև ԱՊՀ երկրներից միակն է, որ դասվել է 1-ին խմբում:

Նոյեմբերի 17-22-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո Երևանում կայացել է Թատրոնի միջազգային ինստիտուտի 34-րդ համաշխարհային համաժողովը:

Նոյեմբերի 26-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որոշում է ընդունվել մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության 2014թ. ցանկում ներառել Հայաստանի կողմից

ներկայացված «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսևորումները Հայաստանում» հայտը:

Դեկտեմբերի 18-ին Հայաստանը ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի բյուրոյի փոխնախագահ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբեյանական տարեթվերի և նշանակալի իրադարձությունների 2014-2015 թթ. օրացույցում ներառվել են 2014 թ.՝ Թորոս Թորոմանյանի ծննդյան 150 ամյակն, Ոսկան Երևանցու ծննդյան 400 ամյակը, 2015 թ.՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակը:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Շարունակվել է ԵԱՀԿ շրջանակներում ՀՀ համագործակցությունը Գործող նախագահության՝ Շվեյցարիայի, մասնակից երկրների և կազմակերպության գործադիր կառույցների հետ՝ ԵԱՀԿ գործունեության երեք հարթություններում:

Մարտի 6-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ժնևում հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի Համադաշնության Նախագահ Դիդիե Բուրկհալտերի հետ:

Հունիսի 3-4-ը տեղի է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի Համադաշնության Նախագահ Դիդիե Բուրկհալտերի պաշտոնական այցը Հայաստան:

ՀՀ հանդես է եկել ԵԱՀԿ-ում ԼՂ խաղաղ կարգավորմանն ուղղված Մինսկի խմբի համանախագահների ջանքերին և ԼՂ հակամարտության հարցերով գործող նախագահության անձնական ներկայացուցչի գործունեությանն անհրաժեշտ աջակցություն ձևավորելու դիրքերից: ԵԱՀԿ Մշտական խորհրդում և Անվտանգության համագործակցության ֆորումում ՀՀ բարձրաձայնել է և գործընկեր երկրների ուշադրությունն է հրավիրել Ադրբեյջանի կողմից Արցախի հետ շփման գծում և հայ-ադրբեյջանական սահմանին հրադադարի կոպտագույն խախտումների, սադրիչ հռետորաբանության և գործողությունների վերաբերյալ:

Դեկտեմբերի 4-ին ՀՀ արտաքին գործերի նախարարը ելույթով հանդես է եկել ԵԱՀԿ Բազելի նախարարական խորհրդի նիստում, որտեղ կազմակերպության անդամ երկրների ուշադրությունն է հրավիրել առ այն, որ Ադրբեյջանի կողմից ռազմատեսչ հռետորաբանությունը, հրադադարի ռեժիմի բազմաթիվ կոպտագույն խախտումները, անընդմեջ կրկնվող դիվերսիոն գործողությունները Հայաստանի և Ադրբեյջանի սահմանին ու Արցախ – Ադրբեյջան շփման գծում նոր թափ են ստացել, և դրանք Բաքվի ապակառուցողական կեցվածքի, միջնորդների առաջարկությունների շարունակական մերժման հետ միասին թույլ չեն տվել առաջընթաց գրանցել ինչպես հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ համաձայնության հասնելու, այնպես էլ վստահության ամրապնդման վերաբերյալ միջազգային հանրության կոչերն իրականություն դարձնելու գործում: Նախարար Նալբանդյանն անդրադարձել է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին և ԵԱՀԿ օրակարգային խնդիրներին:



Նոյեմբերի 7-9-ը Գյումրիում կայացել է ՄՕՏՀԿ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հարցերով աշխատանքային խմբի նիստը:

#### ՏՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 30-ին Սենեգալում տեղի ունեցած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 15-րդ գագաթաժողովին մասնակցել և ելույթ է ունեցել ՀՀ ԱԳ նախարարը: Հայաստանի առաջարկությամբ գագաթաժողովի եզրափակիչ փաստաթղթում ամրագրվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ պետությունների լիակատար աջակցությունը՝ դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից խաղաղ կարգավորմանն ուղղված գործադրվող ջանքերին: Գագաթաժողովը կոչ է արել հակամարտության բոլոր կողմերին զերծ մնալ ուժի և ուժի սպառնալիքի կիրառումից, ինչը կարող է վտանգել կարգավորման խաղաղ գործընթացը, շարունակել բանակցությունները Մինսկի խմբի համանախագահների միասնական և անբաժան հենք հանդիսացող առաջարկությունների հիման վրա՝ մասնավորապես՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքների հիման վրա:

Մարտ-ապրիլ ամիսներին ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում Հայաստանում անցկացվել են ավելի քան 400 մշակութային, գեղարվեստական, կրթական և բուհական միջոցառումներ:

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարթություններով տնտեսական համագործակցության խորացումը շարունակել է կարևոր տեղ զբաղեցնել ՀՀ արտաքին քաղաքական օրակարգում: Աշխատանքներ են տարվել միջազգային ֆինանսատնտեսական կառույցների հետ հարաբերությունների զարգացման, արտասահմանում հայկական արտադրանքի ներկայացման, օտարերկրյա ներդրումների խրախուսման, գործարար համաժողովների կազմակերպման ուղղություններով: Արտաքին գործերի նախարարությունը աջակցել է տարբեր միջազգային տնտեսական համաժողովներին Հայաստանի պատվիրակությունների մասնակցությամբ:

Փետրվարին ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել Արտաքին տնտեսական հարաբերությունների բաղադրիչի ընդլայնմանն ու ուժեղացմանն ուղղված միջոցների մշակման միջգերատեսչական աշխատանքային խմբի 10-դ նիստը:

ՀՀ գերատեսչությունների, Զարգացման հայկական գործակալության, Ազգային մրցունակության հիմնադրամի հետ համատեղ աշխատանքներ են տարվել արտերկրում մի շարք միջազգային ցուցահանդեսներին հայկական կողմի մասնակցության ուղղությամբ:

Հունիսին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Վիեննայում հանդիպում է ունեցել ՄԱԿ Արդյունաբերական Զարգացման Կազմակերպության գլխավոր տնօրեն Լի Յոնգի հետ:

Հոկտեմբերի 10-12-ը ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը Վաշինգտոնում մասնակցել է Համաշխարհային բանկի և Արժույթի

միջազգային հիմնադրամի տարեկան լիազուար նիստին, երկկողմ հանդիպումներ են կայացել Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և միջազգային ֆինանսական կորպորացիայի ղեկավարների հետ:

Նոյեմբերի 9-12-ը Հայաստան է այցելել Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային փոխնախագահ տիկին Լորա Թակի գլխավորած պատվիրակությունը:

Նոյեմբերի 1-4-ը Հայաստան է այցելել Ասիական զարգացման բանկի փոխնախագահ Ժանգ Վենկայի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումներ են կայացել ՀՀ Նախագահի, վարչապետի, տրանսպորտի և կապի նախարարի հետ:

Նոյեմբերի 19-21-ը պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Համաշխարհային Մաքսային Կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիան: Հանդիպումներ են կայացել ՀՀ Նախագահի և վարչապետի հետ:

Նոյեմբերի 18-21-ը ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և ՄԱԿ-ի առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված «Մնուցման հարցերով երկրորդ միջազգային համաժողովի» աշխատանքներին:

Նոյեմբերին ՄԱԿ-ի Դեպի ծով ելք չունեցող երկրների խմբի Ալմաթիի Գործողությունների ծրագրի իրականացման տասնամյակի համաժողովին մասնակցել է ԱԳՆ գլխավոր քարտուղար Շահեն Ավագյանը:

Հայաստանը մասնակցել է սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը Սամարղանդում (Ուզբեկստան) կայացած ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ՋՀԿ) գործադիր խորհրդի 99-րդ նստաշրջանին:

Հայաստանն իր մասնակցությունն է տարբեր երկրներում կայացած խոշոր զբոսաշրջային ցուցահանդեսներին:

#### ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱԳՆ-ը, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները նպաստել են խորհրդարանական դիվանագիտության ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ բարեկամական խմբերի փոխայցելություններին, միջխորհրդարանական հանձնաժողովների նիստերի անցկացմանը, միջխորհրդարանական կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը:

ԱԳՆ-ը համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը:

Արտգործնախարարությունը շարունակել է նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, աջակցել Սփյուռքի նախարարության ծրագրերին և նախաձեռնություններին, Հայաստան-Սփյուռք V-րդ համաժողովի կազմակերպման աշխատանքներին:

ՀՀ ԱԳ նախարարության ուշադրության կենտրոնում են եղել արտերկրում ՀՀ մշակութային ժառանգության պահպանման, հայկական մշակույթի ներկայացման,

տարբեր պետությունների հետ մշակութային կապերի խորացման հարցերը: Այս բոլոր ուղղություններով նախարարությունը համակողմանի աջակցություն է ցուցաբերել ՀՀ մշակույթի նախարարությանը:

Շարունակվել է ընդլայնվել ապակենտրոնացված համագործակցությունը: Այդ նպատակով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից իրականացվել է համապատասխան աշխատանք Հայաստանի մարզերի և քաղաքների՝ տարբեր երկրների վարչատարածքային միավորների հետ հարաբերությունների հաստատման և խորացման ուղղությամբ:

#### ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

2014թ. ընթացքում ՀՀ կողմից ստորագրվել է 85 միջազգային պայմանագիր և 29 միջազգային պայմանագիր չհանդիսացող փաստաթուղթ, վավերացվել է 78 և ուժի մեջ է մտել 41 միջկառավարական և միջպետական փաստաթուղթ:

ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել և ընդունվել են շուրջ 75 իրավական ակտերի նախագծեր:

#### ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և տարբեր պետություններում գտնվող ՀՀ հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 131000 քաղաքացի:

Փոփոխություններ են կատարվել գործող իրավական ակտերում, որոնցով բարելավվել, կանոնակարգվել և ավելի են դյուրացվել քաղաքացիներին մատուցվող հյուպատոսական ծառայությունները:

Աշխատանքներ են տարվել օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների խախտված իրավունքները վերականգնելու, օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև այլ հարցերում աջակցելու նպատակով:

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ մամլո ասուլիսներ և հարցազրույցներ են տվել աշխարհի հեղինակավոր լրատվամիջոցներին:

Սեպտեմբերի 24-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը դասախոսությամբ հանդես է եկել Կոլումբիայի համալսարանում:

«International New York Times» թերթում լույս է տեսել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հոդվածը «Պատմության մութ, անավարտ էջը. Առաջին համաշխարհային պատերազմն ու Հայոց ցեղասպանությունը» խորագրով:

Հունվարի 7-ին Լիմայում պաշտոնական այցելությամբ գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ելույթով հանդես է եկել Պերուի ԱԳՆ-ում՝ դիվագետների առջև:

Մեպտեմբերի 6-ին ֆրանսիական «Ֆիգարո» թերթում լույս է տեսել ՀՀ ԱԳ նախարարի հոդվածը՝ «Թուրքիան պետք է առերեսվի իր պատմությանը» խորագրով:

Ապրիլի 2-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ելույթ է ունեցել Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում: Նախարարի շնորհիվ է կրթօջախի պատվո դոկտորի կոչում:

Նոյեմբերի 25-ին ԱԳ նախարարը Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ ելույթով հանդես է եկել Ստոկհոլմի Միջազգային խաղաղության հարցերով հետազոտական ինստիտուտում:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալները, դեսպաններն ու գլխավոր հյուպատոսները հարցազրույցներ են տվել օտարերկրյա լրատվամիջոցներին, ելույթներ ունեցել մի շարք հետազոտական կենտրոններում և համաժողովներում:

Տարվա ընթացքում ՀՀ ԱԳ նախարարությունը աջակցություն է ցուցաբերել Հայաստանի մասին նյութեր պատրաստած շուրջ երկու տասնյակ երկրների լրագրողների: Հոկտեմբերին Ամերիկյան հեղինակավոր The New York Times պարբերականը Հայաստանին նվիրված ներդիր է հրատարակել, որում Հայաստանի պատմության վերաբերյալ տարբեր նյութեր են ներկայացված, նաև՝ հարցազրույցներ ՀՀ Նախագահի, արտաքին գործերի, Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարների, Կենտրոնական բանկի նախագահի և մի շարք այլ գործիչների հետ:

Նոյեմբերի 9-16-ը Հայաստանում նկարահանումներ է իրականացրել CNN հեռուստաընկերության նկարահանող խումբը: Հայաստանի մասին ֆիլմը հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է դեկտեմբերի 14-ին:

Վիեննայում լույս տեսնող «Cercle diplomatique et économique international» ամսագրի դեկտեմբերի համարը նվիրված է եղել Հայաստանին: Դեկտեմբերի 30-ին իսպանական ամենախոշոր պարբերականներից մեկը՝ «ԷլՄունդոն», Հայաստանին նվիրված հատուկ թողարկում է տպագրել: